ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2023թ. թիվ 519-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալի զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 28.09.2023թ. թիվ 1657-Ն որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակիչների սոցիալական խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու ընթացքում առաջացած ծախսերը փոխհատուցելու համար, որպես դրամական աջակցություն, հատկացնել 469910 /չորս հարյուր վաթսունինը հազար ինը հարյուր տաս/ ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հնգօրյա ժամկետում հատկացնել գումարը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

06/10/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 6
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. հոկտեմբերի 6-ի
թիվ 519-Ա որոշման

Հ/հ	**Ազգանուն, Անուն**	**Գումարը**	**Պաշտոնը**
1.	Կոստանյան Հեղինե	18450	Վանաձորի թիվ 3 հիմնական դպրոցի տնօրեն
2.	Ստեփանյան Արմեն	63730	ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի աշխատակից
3.	Հարությունյան Սասուն	227680	ՏՄԱԿ ՊՈԱԿ-ի տնօրեն
4.	Ղուկասյան Վլադիմիր	160050	Վլադիմիր Ղուկասյան Ա/Ձ-ի տնօրեն
	Ընդամենը	**469910**	

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

06/10/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ